ՏԱԹԵՎԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՎԵՐԴՅԱՆ
ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի ԱՊՀ էկոնոմիկայի, ագրոբիզնեսի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս
ՀԱԱՀ ԱՊՀ էկոնոմիկայի ամբիոնի հայցորդ

ԼԻԶԻՆԳԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿ ԵՎ ԴՐԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ

Համաձայն տնտեսագիտական գրականության, լիզինգ բառը ծագել է անգլերեն lease բառից, որը նշանակում է «վարձակալություն»: «Լիզինգ» հասկացությունը հիմնված է սեփականության իրավունքի մասնատման վրա, որի էությունն է տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքները: Հատկապես իրավական պայմանագրային ներդրումների ձև է ֆինանսական լիզինգը: Լիզինգը կնքվում է լիզինգատուի հետ ում առևտրական գործունեությունը կապված ֆինանսավորման հետ իրականացվում է առևտրական սկզբունքներով, ինչպես նաև մասնագիտական հիմունքներով: Դրանում է կայանում նրա առավելությունը արտադրանքի բաշխման պայմանագրից, որի կազմերից մեկը հանդես է գալիս ինքը պետությունը: Ֆինանսական լիզինգի պայմանագիրը, որպես ֆինանսական վարձակալության հեռանկար ծագել է կողմերի պահանջարկի գոյության շնորհիվ՝ նրանց միջև ունեցվածքի շահագործումից առաջացած հարկային բեռի և ծախսերի բաշխման ընթացքում: Այդ դեպքում հարկերի և այլ վճարումների հարցում պետության հետ առնչություն չի ունենում, իսկ պարտավորությունները կատարվում են ամբողջ ծավալով, և միայն հարկային բեռի բաշխումն է, որ իրականացվում է ըստ պայմանագրի:

Լիզինգի առավել ստույգ հասկացողությունը պարունակվում է Համաշխարհային բանկի մեկնաբանություններում.

«Լիզինգը դա կողմերի միջև պայմանագրային փոխհարաբերություններ են, որոնք թույլատրում են կողմերից մեկին պայմանավորված պարբերական վճարումների փոխարեն օգտագործել տեխնիկան և այլ նյութական արժեքներ»[1]:

Լիզինգը, որպես ֆինանսական գործիք լայն հնարավորություններ է ընձեռում տնտեսվարող սուբյեկտների համար, մասնավորապես[2]՝

- լիզինգի առարկայի և մատակարարի ընտրության բացարձակ իրավունքի տրամադրում վարձակալին,
- գույքի ձեռքբերման, տեղափոխման, մաքսազերծման և այլ ծախսերի ներառում լիզինգի առարկայի արժեքի, բնականաբար, նաև լիզինգի պայմանագրի մեջ,
- երկարաժամկետ ֆինանսավորում՝ առանց բիզնես-պլաններ պահանջելու,
- լիզինգի պայմանագրի կնքում ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ ԱՄՆ դոլարով և եվրոյով,
- լիզինգառուի շրջանառու միջոցների տնտեսման հնարավորություն,
- լիզինգի առարկաների ընտրություն ինչպես ՀՀ-ից, այնպես էլ արտերկրից,
- լիզինգային պայմանագրի կնքում՝ առանց լրացուցիչ գրավների,
- փաստաթղթերի պարզեցված փաթեթ,
- գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան նորագույն սարքավորումների և տեխնոլոգիաների ձեռքբերում՝ առանց լրացուցիչ միջոցներ ներգրավելու,
- վարձավճարների իրականացում՝ գույքի փաստացի մատակարարումից մեկ ամիս անց,
- մարումների արտոնյալ ժամանակահատված, լիզինգի առարկայի պատվերի փոփոխում,

[1] Газман В.Д Финансовый лизинг. Москва 2003г., 302 стр.
[2] www.acbleasing.am/ advantages

- հայտի քննարկման և լիզինգային պայմանագրերի սպասարկման միջնորդավճարների բացակայություն,
- անվճար խորհրդատվություն՝ սկսած առաջին զրույցից մինչև լիզինգի պայմանագրերի կնքումը. լիզինգի մասնագետների խորհրդատվական աջակցություն,
- ֆինանսավորման հատուկ առաջարկներ և զեղչեր՝ մատակարար կազմակերպություններից,
- լիզինգի առարկայի շահագործման և պայմանագրի գործողության ընթացքում առաջացած ծախսերի արտացոլում լիզինգառուի հաշվապահությունում. ԱԱՀ-ի հաշվանցման հնարավորություն՝ մարումներին զուգահեռ:

Իրավաբանորեն ձևակերպված ունեցվածքի սեփականատերը ենթադրաբար ակնկալում է տեխնիկական օգտագործողից ստանալ կանխիկ միջոցների հոսք, նրա համար, որպեսզի իրականացնի լիզինգային վճարումներ, այլ ոչ թե վարկային ակտիվների կազմ:

Լիզինգն արդյունավետ ներդրումային գործիքի ճիշտ ընտրություն է, որը թույլ է տալիս՝

- անցկացնել արդիականացում և հիմնական միջոցների ընդլայնում, առանց սեփական ռեսուրսների շեղման,
- նվազեցնել վերադարձվող վարկային ռեսուրսների պահանջվող ապահովությունը,
- սպասարկել լիզինգային պայմանագիրը ստացված վարձակալության հաշվին, որը ստացվում է լիզինգային գույքի օգտագործումից,
- իրականացնել հարկաբյուջետային քաղաքականություն՝ ելնելով ընկերության նախատեսված դրամական միջոցների հոսքերից,
- օգտագործել ստացված ամորտիզացիայի մեխանիզմը, ինչը նվազեցնում է գույքահարկի և եկամտահարկի գումարը[1]:

ԱԱՀ-ն, որը ներգրավված է լիզինգային վճարի մեջ, ընդունվում է հարկային մարմինների կողմից ամբողջությամբ:

Ծախսերը, որոնք կապված են գույքի շահագործմանը, ինչպես նաև բոլոր լիզինգային վճարները վերաբերում են ինքնարժեքին՝ նվազեցնելով հարկային բազան եկամտահարկի վրա:

Լիզինգային գործունեության զարգացումը հանգեցրել է լիզինգի տարբեր ձևերի ու պայմանների առաջացմանը: Լիզինգի հիմնական ձևերն են.

- ֆինանսական,
- գործառնական:

Ֆինանսական լիզինգը երկարաժամկետ համաձայնագիր է, որը նախատեսում է դրա գործողության ժամանակաշրջանի ընթացքում վճարել սարքավորման իրական արժեքը կամ դրա մեծ մասը, ինչպես նաև վարձատուի շահույթը: Նման համաձայնագրի գործողության ժամկետը լրանալիս հնարավոր են սարքավորումների գնում վարձակալի կողմից մնացորդային արժեքով (սեփականության իրավունքն անցնում է նոր տիրոջը), վարձակալության օբյեկտի վերադարձ վարձատուին, ժամկետի երկարացում՝ նոր համաձայնագրի կնքմամբ: Ի տարբերություն գործառնական լիզինգի, ֆինանսականի դեպքում լիզինգատուի ռիսկը նվազում է, քանի որ պայմանագրով հատուկ նախատեսված չլինելու դեպքում չի թույլատրվում պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ լուծարել պայմանագիրը, և նախատեսվում է սարքավորման գրեթե ողջ արժեքի մարում լիզինգառուի կողմից: Լիզինգի այս ձևը շատ նման է երկարաժամկետ բանկային վարկավորմանը: Իսկ ահա ֆինանսական լիզինգի դեպքում սովորաբար սարքավորման տեխնիկական սպասարկման և ապահովագրության ծախսերը կրում է լիզինգառուն:

Յուրաքանչյուր երկիր ունի իր ֆինանսական լիզինգի վարձակալության պայմանները, և այն Հայաստանի համար հետևյալն է (տե՛ս աղյուսակը).

[1] Лещенко М.И. Основы лизинга, Уч. Пособие 2001, 333 стр.

Աղյուսակ

Ֆինանսական վարձակալության պայմանները[1]

1	Կանխավճար	0-50% կանխավճար չկատարելու դեպքում լրացուցիչ ապահովությունը պարտադիր է:
2	Տարեկան տոկոսադրույք	սկսած 12%-ից
3	Ֆինանսավորման արժույթ	AMD, USD, EUR
4	Ֆինանսավորման ժամկետ	մինչև 5 տարի
5	Գործարքի իրականացման միանվագ միջնորդավճար	1% ֆինանսավորվող գումարից, բայց ոչ ավել, քան 600000 ՀՀ դրամ: Միջնորդավճարը գանձվում է միանվագ՝ լիզինգի տրամադրման պահին:
6	Հիմնական գումարի և տոկոսագումարի վճարման կարգ	1. Ամենամսյա հավասարաչափ վճարումներ 2. Կախված բիզնեսի սեզոնայնությունից՝ ճկուն գրաֆիկով վճարումներ
7	Ապահովագրություն	Պարտադիր /տարեկան/ ապահովագրություն:
8	Լիզինգի ժամկետանց մայր գումարի նկատմամբ կիրառվող տույժ	0.2% օրական
9	Լիզինգի ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ կիրառվող տույժ	0.2% օրական
10	Տուգանք՝ մոնիթորինգի պայմանները չկատարելու համար	1% լիզինգի գումարի մնացորդից, բայց ոչ ավել, քան 2000000 ՀՀ դրամ
11	Միջնորդավճար՝ վերջնական օֆերտային հրաժարվելու դեպքում	0.15% ֆինանսավորվող գումարից
12	Տուգանք՝ վաղաժամկետ մարվող պարտավորությունների նկատմամբ	Պարտավորությունների վաղաժամկետ վճարման պարագայում տուգանք չի կիրառվում:
13	Լրացուցիչ ապահովություն	Երաշխավորություն, շարժական և անշարժ գրավի տեսքով և այլն:

Գործառնական լիզինգի պայմանագրի առարկա են հանդիսանում նախ և առաջ բարոյական մաշվածության արագ տեմպեր ունեցող սարքավորումները: Օրինակ՝ էլեկտրոնային տեխնիկա, գիտական հետազոտությունների համար նախատեսված սարքավորումներ, պատճենահանման մեքենաները, մարդատար մեքենաներ և այլ տրանսպորտային միջոցներ: Շուկայի հատվածներից ելնելով, այսինքն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե որտեղ է իրականացվում լիզինգային գործառնություն՝ առանձնացնում ենք ներքին կամ ներազգային լիզինգ և արտաքին կամ միջազգային լիզինգ:

Ներքին լիզինգի իրականացման դեպքում լիզինգատուն, լիզինգառուն հանդիսանում են ռեզիդենտներ: Ներքին լիզինգը կարգավորվում է ներքին օրենսդրությամբ:

Միջազգային լիզինգի դեպքում լիզինգատուն և լիզինգառուն հանդիսանում են տարբեր երկրների ռեզիդենտներ:

ԼՂՀ-ի տնտեսության իրական հատվածը ներդրումների՝ հատկապես օտարերկրյա ներդրումների ներգրավման սուր կարիք ունի հիմնական միջոցների արմատական փոփոխման և ժամանակակից տեխնոլոգիաների ձեռքբերման համար: Միայն գյուղատնտեսության մեջ տեխնիկայի շուրջ 70%-ը շահագործվում է 20 տարուց ավելի և այդ ընթացքում նորացվել է միայն 30%-ը: Տեխնիկայի 5%-ն է համապատասխանում շահագործման նորմաներին:

Կարևոր մեխանիզմներից մեկը օտարերկրյա ներդրումների ներգրավումն է արդյունաբերական նշանակության հիմնական միջոցների ձեռքբերման համար: Այդ գործում կարևոր դեր կարող է կատարել միջազգային լիզինգը, որի առանձնահատկությունն է միաժամանակ և՛ ֆինանսավորման, և՛ ներգրավման մեխանիզմը:

Միջազգային ֆինանսական կորպորացիան, որը Համաշխարհային բանկի անդամ է, անցկացնելով շուկայական մոնիթորինգ ՄԱԿ-ի համար, ցանկություն է հայտնել մասնակցելու ԼՂՀ-ի՝ լիզինգային օպերացիաների մեջ հնարավորությունների ստեղծմանը:

[1] Tariffs Arm 17.10.12, pdf

Զարգացած երկրներում, ինչպես նաև ԱՊՀ շատ երկրներում լիզինգի բաժինը ՀՆԱ-ում հասնում է 10%-ի, քանի որ այդ երկրներում գոյություն է ունեցել պետվաճառքը: ԼՂՀ-ում լիզինգային գործարքի բաժինը ՀՆԱ-ում չի հասնում 1%-ի: Իրավիճակի լավացման համար պետք է ներդնել որոշ փոփոխություններ գործող օրենսդրությունում կամ ստեղծել առանձին օրենսդրական նորմեր: Նշենք, որ լիզինգային շուկայի գործունեությունը կարգավորվում է ԼՂՀ-ի քաղաքացիական օրենսգրքով և կրեդիտային կազմակերպությունների օրենքով, որտեղ լիզինգային կազմակերպություններին տրվում է առանձին տեղ: Սակայն գործող օրենսդրությունը և պայմանները թույլ չեն տալիս օգտագործել արագացված ամորտիզացիայի մեթոդները, ինչը տարածված է միջազգային պրակտիկայում: Հենց օպտիմալացման գնի ամորտիզացիոն հնարավորությունն ընկերությանը նպատակադրում է ներազդել արտադրության ֆինանսական արդյունքի վրա: Ներկա պահին հիմնական միջոցների ամորտիզացիան ոչ արդյունավետ ձևով է կազմակերպվում, ինչը լիզինգը դարձնում է ոչ մրցունակ կրեդիտայինի համեմատ;

ԼՂՀ-ում լիզինգի զարգացմանը խանգարում է թերի հարկային օրենսդրությունը: Այդ պատճառով այսօրվա լիզինգը չի համընկնում ֆինանսական վարձակալության հասկացության տակ, որի համաձայն զարգացած տնտեսությունում նորացվում է տեխնոլոգիան, այլ ավելի շատ նման է իր բոլոր թերություններով ցածր արդյունավետության ապրանքային կրեդիտի:

Լիզինգային գործառնությունները, որոնց նախատիպը հայտնի է դեռևս հնագույն ժամանակներից, սկիզբ են առել ամերիկայից և աստիճանաբար տարածվել գրեթե բոլոր երկրներում:

Լիզինգի հիմնական տեսակները ֆինանսական և գործառնական վարձակալություններն են: Լիզինգի հիմնական առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս սկսնակ ձեռնարկատերերին նախաձեռնել կամ մեծապես ընդլայնել սեփական գործը՝ ունենալով սահմանափակ սեփական սկզբնական կապիտալ: Լիզինգն արտադրությունների ընդլայնման հնարավորություն է ընձեռում մանր ու խոշոր արտադրողների համար հավասար պայմաններով:

Համաշխարհային լիզինգային շուկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լիզինգն առավել հեռանկարային ներդրումային գործիք է, քանի որ միանշանակ գրավիչ է ինչպես ներդրողի, այնպես էլ փոխատուի համար:

Ներկայումս լիզինգը բիզնեսի ամենատարածված ձևերից մեկն է: Այսօր Եվրոպայում ներդրումների առավել քան 25%-ը կատարվում է լիզինգի ճանապարհով: Վերջին 20 տարիներին լիզինգային գործառությունների տարեկան ծավալն աշխարհում աճել է 10 անգամ՝ 2000թ. կազմելով մոտ 540 մլրդ. դոլար: Ընդ որում ԱՄՆ-ին և Կանադային բաժին է ընկնում 41%-ը, Ասիային՝ 28%-ը, Եվրոպային՝ 19%-ը: Չնայած ձեռնարկատիրության լիզինգային ձևի անհամեմատ շահավետությանը, ցավոք, այն մեր տնտեսության մեջ դեռևս շատ դանդաղ է արմատավորվում: Բացի օրենսդրական բացթողումները, շատ ձեռնարկատերեր և, հատկապես, սկսնակները, դեռևս չունեն լիզինգային գործարքների մեխանիզմների վերաբերյալ բավարար գիտելիքներ: Այնուամենայնիվ, ներկայումս մեր հանրապետությունում լիզինգային գործունեության վերաբերյալ հետաքրքրությունը շարունակում է աճել[1]:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոնշյալները, առաջարկվում է հեռանկարում ստեղծել միջբանկային լիզինգային ընկերություններ, որոնք հնարավորություն կտան խոշոր ծրագրերի իրացման համար օպերատիվ ձևով համակենտրոնացնել զգալի կապիտալ, համահարթեցնել ռիսկը, առավել արդյունավետ համագործակցել արևմտյան գործընկերների հետ և օգտագործել լիզինգի տարբեր ձևերը: Միաժամանակ լիզինգի զարգացումը մեզ մոտ բախվում է նշանակալի դրամական միջոցների մոբիլիզացման խնդրի հետ, որոնք կարող էին սարքավորումների գնման համար կազմավորման աղբյուր հանդիսանալ: Արտասահմանյան փորձը վկայում է, որ նպատակահարմար է լիզինգային գործարքներն ընդգրկել բանկերի գործունեության մեջ:

[1] aif.am1

ԼԻԶԻՆԳԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿ ԵՎ ՆՐԱ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՎԵՐԴՅԱՆ
ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի ԱՊՀ էկոնոմիկայի, ագրոբիզնեսի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս
ՀԱԱՀ ԱՊՀ էկոնոմիկայի ամբիոնի հայցորդ

Համառոտագիր

ԼՂՀ-ի տնտեսության իրական հատվածը ներդրումների, հատկապես օտարերկրյա ներդրումների ներգրավման սուր կարիք ունի հիմնական ֆոնդերի արմատական փոփոխման և ժամանակակից տեխնոլոգիաների ձեռքբերման համար: Միայն գյուղատնտեսությանն մեջ տեխնիկայի շուրջ 70%-ը շահագործվում է 20 տարուց ավելի և այդ ընթացքում նորացվել է միայն 30%: Տեխնիկայի 5%-ն է համապատասխանում շահագործման նորմաներին:

Հոդվածում հիմնավորվում է լիզինգը որպես ներդրման տեսակ և նրա օգտագործման կարևորությունն ու անհրաժեշտությունը ԼՂՀ տնտեսությունում՝ ելնելով այն հանգամանքից, որ ԼՂՀ տնտեսությունը կարիք ունի օտարերկրյա ներդրումների՝ հիմնական միջոցերի ձեռքբերման, ժամանակակից տեխնոլոգիայի ներդրման, որոնք կարող են մրցունակ լինել այլ ընկերություններին;

Բանալի բառեր. *լիզինգային գործարք, պայմանագիր, հարկեր, տեխնոլոգիա, ֆինանս, ռեսուրս, ֆոնդ, մոնիթորինգ, փոխառություն:*

ЛИЗИНГ КАК ФОРМА ИНВЕСТИЦИЙ И НЕОБХОДИМОСТЬ ЕГО ИСПОЛЬЗОВАНИЯ В НКР

ТАТЕВИК ВЛАДИМИРОВНА ВЕРДЯН
преподаватель кафедры экономики АПК, агробизнеса, бухгалтерского учета и аудита Степанакертского филиала Национального аграрного университета Армении
соискатель кафедры экономики АПК Национального аграрного университета Армении

Аннотация

Реальный сектор экономики НКР крайне нуждается в инвестициях, особенно иностранных, для коренного обновления основных фондов и внедрения современных технологий. Только в сельском хозяйстве срок службы около 70% техники превышает 20 лет, и лишь 30% сельхозтехники было обновлено за это время. 5% техники соответствует нормам эксплуатации. Исходя из вышесказанного, в статье обосновывается необходимость и важность использования лизинга в экономике НКР как формы инвестиций, обеспечивающей повышение конкурентоспособности компаний.

Ключевые слова: *лизинговая сделка, соглашение, налоги, технология, финансы, ресурс, фонд, мониторинг, заем.*

EQUIPMENT LEASING AS A FORM OF INVESTMENTS AND ITS NEED IN THE NKR

TATEVIK VLADIMIR VERDYAN
Lecturer, Chair of Economics of Agri Industrial Complex, Agri-business, Accounting and Auditing, Stepanakert Branch of Armenian National Agrarian University
Ph.D. Student, Chair of Economics of Agri Industrial Complex, Armenian National Agrarian University

Abstract

The real sector of the economy of the NKR desperately needs investments, namely foreign investments for completely replacing the fixed assets with new ones. Only in the agriculture the operation period of about 70% of the machinery and equipment exceeds 20 years, and the remaining 30% was replaced during that period. Based on the above stated argument, the article justifies the need for and importance of using equipment leasing in the economy of the NKR as a form of investments, thus making companies more competitive.

Keywords: *Leasing transaction,contract, taxes, technology, finance, resource, fund, monitoring, lending.*